# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1>>

ք. Երևան

<<26>> հունիսի 2019թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Կատարող) ի դեմս ընկերության տնօրեն Գ. Փոկրիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, 143 և 147 մակապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

### 2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժի և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **3030000 (երեք միլիոն երեսուն հազար) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում

է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Ք. Գավառ, Բոշնաղյան 1 նրբ. 8 |
| Կենտրոնական գանձապետարան | «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900012410032 | 16021021339500 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 08419558 |
| Է. Կիրակոսյան ------------------------------- | Գ. Փոկրիկյան------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

Հավելված N 1
« *26* » հունիսի 2019թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, 143 և 147 մականպարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ դրամ

| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | միավոր գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | կատարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | հասցեն | Ժամկետը (յուրաքանչյուր չափաբաժնի համար) |
| 1 | 71241200/29 | 1. Նախատեսել.<br>- Ճաշարանի պատերի և հատակների վերանորոգում՝ խեցեսալերով և կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ,<br>- Օդափոխության համակարգի ստուգում և անհրաժեշտության դեպքում՝ փոխում;<br>- Լվացարանների փոխարինում նորով;<br>- Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեսալերի և կերամիկական սալերի, զուգարանակոնքերի և լվացարանների փոխարինման աշխատանքներ,<br>- Ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով;<br>- Հին դռների և լուսամուտների (լուսամուտագոգերով) փոխարինում մետաղապլաստով, լուսամուտների արտաքին շեպերի ց/ավազե սվաղ և արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղով, | դրամ | 780000 | 780000 | 1 | Պատկանյան փողոց h.20 | Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | - Աստիճանավանդակների նորոգում, երեսապատում պրեսգրանիտով, մետաղական բազրիքների փոխում այումինենով,<br>- Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ծեփամածկում, ներկում լատեքսային ներկով,<br>- Հին մանրահատակի նորոգում և նորի իրականացում, անհրաժեշտության դեպքում լամինատե, պրեսգրանիտե հատակի իրականացում,<br>- Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր:<br>- հարթ տանիքի հիմնանորոգում<br>- Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ:<br>- Բակի բարեկարգում<br>- Ցանկապատի կառուցում փոքր դռնակների հետ միասին, ներկում, էսքիզի համաձայնեցում Պատվիրատուի հետ,<br>- Դարպասների կառուցում,<br>- ՆՈՒՀ-ի շուրջ սալվածքների իրականացում,<br>- Սևահողի ավելացում սիզամարգերում, սերմի ցանք,<br>- Տարածքի ջրամատակարարման, կոյուղու և այլ կոմունիկացիաների դիտահորերի նիշերի ուղղում ըստ տեղանքի և անհրաժեշտության դեպքում նորի կառուցում,<br>- Տարածքի ասֆալտապատում (անձրևաջրերի և այլ մակերեսային ջրերի ուղղորդված ջրահեռացում):<br>- Անհրաժեշտության դեպքում նոր արահետների կառուցում,<br>- Խաղահրապարակների կառուցում, անհրաժեշտության դեպքում խաղերի տեղադրում, տարածքների բարեկարգում, գծանշում,<br>- Նստարանների կառուցում կամ պատրաստի նստարանների տեղադրում,<br>- Աղբամանների կառուցում կամ տեղադրում,<br>- Տարածքի լուսավորության իրականացում,<br>- ՆՈՒՀ-ի ճակատների լվացում, նորոգում, ներկում, | | | | | | |
| | | - Տնկիների տեղադրում,<br>- Ոռոգման համակարգի կառուցում,<br>- Գեոդեզիական հանույթի իրականացում,<br>- Նախագծի մեջ ներառել բոլոր այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ՆՈՒՀ-ի տարածքը լիարժեք բարեկարգ տեսքի բերելու համար,<br>- Բարեկարգման էսքիզային տարբերակը համաձայնեցնել պատվիրատուի հետ:<br>- Կատարողը պարտավոր է ձեռք բերել բոլոր անհրաժեշտ տեխնիկական պայմանները: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2. Ներկայացնել մանրամասնորեն կատարած ուսումնասիրությունների արդյունում հիմնավորված աշխատանքային ծավալներ:<br>3. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:<br>4. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից:<br>5. Նախագիծը ներկայացնել դրական փորձաքննությամբ:<br>6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո այն համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հետ:<br>7. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները:<br>8. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: | | | | | | |
| 2 | 71241200/30 | 1. Նախատեսել.<br>- Ճաշարանի պատերի և հատակների վերանորոգում՝ խեցեսալերով և կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ,<br>- Օդափոխության համակարգի ստուգում և անհրաժեշտության դեպքում՝ փոխում;<br>- Լվացարանների փոխարինում նորով;<br>- Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեսալերի և կերամիկական սալերի, զուգարանակոնքերի և լվացարանների փոխարինման աշխատանքներ,<br>- Ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով;<br>- Հին դռների և լուսամուտների (լուսամուտագոգերով) փոխարինում մետաղապլաստով, լուսամուտների արտաքին շեպերի ց/ավազե սվաղ և արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղով,<br>- Աստիճանավանդակների նորոգում, երեսապատում պրեսգրանիտով, մետաղական բազրիքների փոխում այլումինեով,<br>- Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ծեփամածկում, ներկում լատեքսային ներկով,<br>- Հին մանրահատակի նորոգում և նորի իրականացում, անհրաժեշտության դեպքում լամինատե, պրեսգրանիտե հատակի իրականացում, | դրամ | 1400000 | 1400000 | 1 | Չեխովի փողոց h.100 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | - Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր:<br>- Թեք տանիքների հիմնանորոգում<br>- Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ:<br>- Բակերի բարեկարգում<br>- Ցանկապատի կառուցում փոքր դռնակների հետ միասին, ներկում, էսքիզի համաձայնեցում Պատվիրատուի հետ,<br>- Դարպասների կառուցում,<br>- ՆՈՒՀ-ի շուրջ սալվածքների իրականացում,<br>- Սևահողի ավելացում սիզամարգերում, սերմի ցանք,<br>- Տարածքի ջրամատակարարման, կոյուղու և այլ կոմունիկացիաների դիտահորերի նիշերի ուղղում ըստ տեղանքի և անհրաժեշտության դեպքում նորի կառուցում,<br>- Տարածքի ասֆալտապատում (անձրևաջրերի և այլ մակերեսային ջրերի ուղղորդված ջրահեռացում):<br>- Անհրաժեշտության դեպքում նոր արահետների կառուցում,<br>- Խաղահրապարակների կառուցում, անհրաժեշտության դեպքում խաղերի տեղադրում, տարածքների բարեկարգում, գծանշում,<br>- Նստարանների կառուցում կամ պատրաստի նստարանների տեղադրում,<br>- Աղբամանների կառուցում կամ տեղադրում,<br>- Տարածքի լուսավորության իրականացում,<br>- ՆՈՒՀ-ի ճակատների լվացում, նորոգում, ներկում,<br>- Տնկիների տեղադրում,<br>- Ոռոգման համակարգի կառուցում,<br>- Գեոդեզիական հանույթի իրականացում,<br>- Նախագծի մեջ ներառել բոլոր այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ՆՈՒՀ-ի տարածքը լիարժեք բարեկարգ տեսքի բերելու համար,<br>- Բարեկարգման էսքիզային տարբերակը համաձայնեցնել պատվիրատուի հետ:<br>- Կատարողը պարտավոր է ձեռք բերել բոլոր անհրաժեշտ տեխնիկական պայմանները:<br>2. Ներկայացնել մանրամասնորեն կատարած ուսումնասիրությունների արդյունում հիմնավորված աշխատանքային ծավալներ:<br>3. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:<br>4. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից:<br>5. Նախագիծը ներկայացնել դրական փորձաքննությամբ: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո այն համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հետ:<br>7. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները:<br>8. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: | | | | | | |
| 5 | 71241200/33 | 1. Նախատեսել.<br>- Ճաշարանի պատերի և հատակների վերանորոգում՝ խեցեսալերով և կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ,<br>- Օդափոխության համակարգի ստուգում և անհրաժեշտության դեպքում՝ փոխում;<br>- Լվացարանների փոխարինում նորով;<br>- Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեսալերի և կերամիկական սալերի, զուգարանակոնքերի և լվացարանների փոխարինման աշխատանքներ,<br>- Ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով;<br>- Հին դռների և լուսամուտների (լուսամուտագոգերով) փոխարինում մետաղապլաստով, լուսամուտների արտաքին շեպերի ց/ավազե սվաղ և արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղով,<br>- Աստիճանավանդակների նորոգում, երեսապատում պրեսգրանիտով, մետաղական բազրիքների փոխում այլումինեով,<br>- Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ծեփամածկում, ներկում լատեքսային ներկով, | դրամ | 850000 | 850000 | 1 | Գ.Նժդեհի փողոց h.42 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| | | - Հին մանրահատակի նորոգում և նորի իրականացում, անհրաժեշտության դեպքում լամինատե, պրեսգրանիտե հատակի իրականացում,<br>- Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր:<br>- Հարթ և թեք տանիքների հիմնանորոգում<br>- Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ:<br>- Բակերի բարեկարգում<br>- Ցանկապատի կառուցում փոքր դռնակներերի հետ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | միասին, ներկում, էսքիզի համաձայնեցում Պատվիրատուի հետ,<br>- Դարպասների կառուցում,<br>- ՆՈՒՀ-ի շուրջ սալվածքների իրականացում,<br>- Սևահողի ավելացում սիզամարգերում, սերմի ցանք,<br>- Տարածքի ջրամատակարարման, կոյուղու և այլ կոմունիկացիաների դիտահորերի նիշերի ուղղում ըստ տեղանքի և անհրաժեշտության դեպքում նորի կառուցում,<br>- Տարածքի ասֆալտապատում (անձրևաջրերի և այլ մակերեսային ջրերի ուղղորդված ջրահեռացում):<br>- Անհրաժեշտության դեպքում նոր արահետների կառուցում,<br>- Խաղահրապարակների կառուցում, անհրաժեշտության դեպքում խաղերի տեղադրում, տարածքների բարեկարգում, գծանշում,<br>- Նստարանների կառուցում կամ պատրաստի նստարանների տեղադրում,<br>- Աղբամանների կառուցում կամ տեղադրում,<br>- Տարածքի լուսավորության իրականացում,<br>- ՆՈՒՀ-ի ճակատների լվացում, նորոգում, ներկում,<br>- Տնկիների տեղադրում,<br>- Ոռոգման համակարգի կառուցում,<br>- Գեոդեզիական հանույթի իրականացում,<br>- Նախագծի մեջ ներառել բոլոր այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ՆՈՒՀ-ի տարածքը լիարժեք բարեկարգ տեսքի բերելու համար,<br>- Բարեկարգման էսքիզային տարբերակը համաձայնեցնել պատվիրատուի հետ:<br>- Կատարողը պարտավոր է ձեռք բերել բոլոր անհրաժեշտ տեխնիկական պայմանները:<br>2. Ներկայացնել մանրամասնորեն կատարած ուսումնասիրությունների արդյունում հիմնավորված աշխատանքային ծավալներ:<br>3. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:<br>4. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից:<br>5. Նախագիծը ներկայացնել դրական փորձաքննությամբ:<br>6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո այն համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հետ:<br>7. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները:<br>8. Ներկայացնել աշխատանքների կատարման համար | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: | | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410032
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն
Ք. Գավառ, Բոշնաղյան 1 նրբ. 8
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
16021021339500
ՀՎՀՀ 08419558

Գ. Փոկրիկյան----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 26 » հունիսի 2019թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200 /29 | Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 137 մակապարտեզի հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | ... | ... | ... | ... | ... | ... | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 |
| 2 | 71241200 /30 | Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 143 մակապարտեզի հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | ... | ... | ... | ... | ... | ... | 1400000 | 1400000 | 1400000 | 1400000 | 1400000 | 1400000 | 1400000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 71241200/33 | Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի h. 147 մակապարտեզի հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | … | … | … | … | … | … | 850000 | 850000 | 850000 | 850000 | 850000 | 850000 | 850000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410032
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն
Ք. Գավառ, Բոշնաղյան 1 նրբ. 8
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
16021021339500
ՀՎՀՀ 08419558

Գ. Փոկրիկյան--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«26» հունիսի 2019թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 3.1
« 26 » հունիսի 2019թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը
Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_________________________
ազգանուն, անուն

_________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_________________________
ազգանուն, անուն

_________________________
ստորագրություն

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «_____»_________________ 20 թ.**

<<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ>> ՄՊԸ –ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գերասիմ Փոքրիկյանի, Ն/Ք՝ 002759553, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու

դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /__/____/20__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ>> ՍՊԸ

ընկերության անվանումը

Ք. Գավառ, Բոշնաղյան 1 նրբ. 8

ընկերության հասցեն

*«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ*

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

*16021021339500*

ընկերության բանկային հաշվեհամարը

08419558

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Գերասիմ Փորրիկյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Օր/ամիս/տարի

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
** *լրացվում է մասնակցի կողմից*

| | |
|---|---|
| 1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1] | |
| 2. Թիվ | |
| 3. Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___թ. | |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ` **<<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ>> ՍՊԸ** | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)` **<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ** | |
| 6. Վճարողի հաշվի համարը` **16021021339500** | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ` **08419558** | |
| 8. Վճարողի ՀԾՀ` | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ` Երևանի քաղաքապետարան | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ` 02593108 | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)` Կենտրոնական գանձապետարան | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)900015211429 | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)` **303 000 /երեք հարյուր երեք հազար/** | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)` **ՀՀ դրամ, AMD** | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը` ***(պայմանագրի կատարման ապահովման համար)*** | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)` | |
| 19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում> | |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները`<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ.<br>Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___թ. |

---

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*